ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԲՀԿ, 2024 թ.

Մնացորդ առ 01.01.2025 թ. դրությամբ՝ 4.290.000 դր.

2024 թվականին կազմակերպությունը ստացել է ֆինանսական աջակցություն 30.436.000 դրամի չափով:

Ծախսեր.

Աշխատավարձ՝ ներառյալ հարկեր - 5.830.022 դր.

Կոմունալ և գրասենյակային ծախսեր – 192.380 դր.

Բանկային ծախսեր -41.090 դր.

Ծրագրային ծախսեր – 25.194.708 դր.

Ընդամենը — 31.258.200 դր.

1.Երևանի Զարգացման կենտրոն

Կենտրոն են այցելում սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները և նրանց մայրերը: Կենտրոնում գործում են համակարգչային դասընթացների, պարի, նկարչության, թատերական, օտար լեզուների՝ անգլերեն և ռուսերեն, քանդակագործության, հուլունքագործության խմբակները: Երեխաները զբաղվում են նաև սպորտով: Ծնողների համար կազմակերպվում են մարզման կուրսեր ու դասընթացներ: Կազմակերպվել են երեխաների և նրանց խնամակալների ստեղծագործական միտքը ներկայացնող ցուցահանդեսներ և գրական երեկոներ՝ մայրիկները ներկայացրել են հեղինակին պատմվածքներն ու բանաստեղծությունները:

Կազմակերպվել են սպորտային խաղեր, վիկտորինաներ, այցելություններ մշակութային կենտրոններ, էքսկուրսիաներ:

2. Ստեփանավանի Զարգացման կենտրոն

Կենտրոն են այցելում ք. Ստեփանավանի, Գյուլագարակ, Ուռուտ, Կուռթան գյուղերի սոց. անապահով երեխաները: Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, շախմատի, ձեռքի աշխատանքի խմբակները: Կազմակերպվել են սպորտային խաղեր, վիկտորինաներ, ճամբարներ, թատերական ներկայացումներ, այցելություն Երևան՝ ծանոթություն Երևանի Զարգացման կենտրոնի երեխաների ու նրանց գործունեության հետ:

3. Արագածավանի Զարգացման կենտրոն

Կենտրոն են այցելում Արագածավանի և հարակից գյուղերի երեխաները: Կենտրոնում գործում են նկարչության, կավագործության, գորգագործության, թատերական, վոլեյբոլի, թենիսի, ֆուտբոլի խմբակները: Կազմակերպվել են ճամբարներ, միջոցառուներ, սպորտային խաղեր, թատերական ներկայացումներ:

4.Ճամբարակի Զարգացման կենտրոն

Կենտրոն են այցելում Ճամբարակի և Մարտունի գյուղերի երեխաները: Կենտրոնում գործում են նկարչության, թատերական, շախմատի խմբակները: Անցկացվում են նաև դասապատրաստումներ: Կազմակերպվել են ճամբարներ, միջոցառուներ, սպորտային խաղեր, թատերական ներկայացումներ:

4. Օգնություն սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց
   Կազմակերպվել են սիստեմատիկ այցելություններ, տոնական միջոցառումներ, ինչպես նաև էքսկուրսիաներ՝ քաղաքից դուրս:

5. Ամսական նպաստի տրամադրում ծնողազուրկ երեխաներին, սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց, որբեվարիներին:
6. Օգնություն սոց. անապահով ընտանիքներին: Տրամադրվել են ֆինանսական և սննդի օգնություն, ինչպես նաև՝ կենցաղային ապրանքներ և օգտագործված կահույք:

Տնօրեն՝ Գ. Հակոբյան

23.03.2025 թ.